

ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ

(ՏՊԱԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԳԻՐԻԸ)

ՈՍՏԱՆԻ ներկայ թիւը կը սկսի, հայ սպագրութեան յորսմարիւտանակի առքիւ գրուածով մը: Խմբագրութիւնն, նկատի ունենալով սպագրուած առաջին հայերէն գիրքին հետաքրքրաշարժ անբողոքութիւնը, ստորեւ կուտայ ակնո չորս զխաւոր բաժանումներէն իւրաքանչիւրին բովանդակութիւնը, քաղելով զանոնք 1818ին Կ. Պոլիս ստուած Կոչ սպագրութիւն ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐէն: Հաւանական է որ մեր ձեռքին չակ գտնուած սպագրութեան մեջ ինչ ինչ փոփոխութիւններ կամ յաւելումներ ու նոյնացումներ ձեռքի ունեցած ըլլան, քաղցասանմբ 1512ի առաջին սպագրութեան, սակայն Պարզատուարը իր ընդհանուր գիծերուն մեջ կը պահէ նոյն յասկանիչը:

Ա.

ԼՈՒՍՆԻՒ ԵՐԱԶԱՅՈՅՑ

Առաջին

Օրն լուանին՝ բարի է ամենայն իրաց. զի Ալլամ նոր ստեղծաւ. սերմանել, անկել, ի ճանապարհ երթալ, հիմն արկանել. զի ոչցօր սկիզբն արար Նոյ տապանին. և Մովսէս այսօր եճան գծողովուրդն Եգիպտոսէ. և Փարրիէլ ևս ուղջոյն Մարիամօւ և Սողոմոն այսօր սկիզբն արար տաճարին. հիւանդն ողջանայ. կորուստն գտանի. երազն ի բարին կատարի:

Երկրորդ

Օրն չար է. զի նախաստեղծն այսօր անկաւ. և Կայէն այսօր սպան զՀարէլ և չաղախեցաւ յարնէ նորա. որ ծնանի՝ հեզ և խոնարհ լինի, այլ չնացող, հիւանդն չապրի, կորուստն մինչև ի 10 օրն գտանի, սուսն զնեյն, նաև ուղղելն՝ ալէկ է. երազն երրորդ օրն կատարի:

Յրորդ

Օրն՝ բարի է ամենայն իրաց, որ ծնանի Հորճաւոր լինի և պատերազմող, զի այսօր Իշխոյն Հեզինէ զխաչն եգիտ. և Սողոմոն այսօր ծնաւ. գնել՝ վաճառել՝ բարի է. կորուսեալն գտանի, հիւանդն ողջանայ, փախուցեալն դառնայ, երազն ի բարին կատարի:

Չորորդ

Օրն պանդանութիւն է. մի՛ գներ, մի՛ վաճառեր, մի՛ ի դուրս ելաներ. զի այսօր քակեաց նարուզողոնտար զտաճարն, և Մոզքն այսօր բերին ընծայն. և Հերովդէս խաբեցաւ ի մողուցն: Ար ծնանի Հորճաւոր լինի և մեծութեան հասանի, հիւանդն մեռանի, երազն սուտ է:

Հիմնգրքորդ

Օրն՝ բարի է ամենայն իրաց . մեղուն աղէկ գայ , սերմանել , տնկել , ի ճանապարհ երթալ , նաւ ուղղել , որ ծնանի բարտաւոր լինի . զի այսօր նոյ Եմուտ ի տապանն . և Սողոմոն դտաճարն շինեաց , կորուստն գտանի . հիւանդն ողջանայ . երազն ի բարին կատարի :

Վեցերորդ

Օրն՝ բարի է ամենայն իրաց , մանկունս յուսումն տալ , զի այսօր եմուտ տէր առ դպիրս . գամենայն ինչ գործել բարի է . և այսօր առաքեաց տէրն զառաքեալսն ի քարոզութիւն . հիւանդն ողջանայ . որ ծնանի բարտաւոր լինի . կորուստն մինչև ի քառասուն օր գտանի . երազն ի բարին կատարի :

Յօրերորդ

Օրն՝ պահպանութիւն է , զի այսօր արտաքսեաց Աստուած զԱղա՛ս ի Դրախտէն . որ ծնանի՝ պիտակոտ լինի ու գող . հիւանդն խիստ նեղի բայց ապրի . երազն սուտ է :

Ութերորդ

Օրն՝ բարի է ամենայն իրաց . զի այսօր եղև սկիզբն թլփատութեան . և լեզուքն այսօր բաժանեցան , հիւանդն ողջանայ , կորուստն գտանի , որ ծնանի՝ ձայնեղ լինի և ծերանայ , երազն՝ ութ օրն կատարի :

Իններորդ

Օրն՝ բարի է , զի այսօր մկրտեցաւ Քրիստոս , որ ծնանի յերկարակեաց լինի . գնել . վաճառել . ի ճանապարհ երթալ . մանուկ մկրտել . թագաւոր տեսանել , առ աւագի դատաստան մտանել . կորուսեալն գտանի , հիւանդն յաւանայ , երազն ի բարին կատարի :

Տասներորդ

Օրն՝ ի ծնունդն է . մի՛ ինչ գործեր՝ չէ բարի , պատրաստ կաց յամենայն իրաց , մի՛ երդնուլ . մի՛ երդումն տալ . մաղ մի՛ հարթել . որ ծնանի խեղդամահ լինի . հիւանդն ողջանայ . փախուցեալն գտանի . երազն երրորդ օրն կատարի :

Յասնիւմէկերորդ

Օրն՝ աշխարհ ջրհեղեղաւ ջնջեցաւ . ամէն ինչ գործել չէ բարի . մի՛ երդնուլ . և մի՛ երդումն տալ , զի այսօր եկուլ կէտն զՅօնան . և մի՛ ի ջուր մտանել . որ ծնանի փութով մնուանի . մի՛ ի ճանապարհ գնալ , զի այսօր ելաւ Աղա՛ս ի դրախտէն . հիւանդն յառէ . երազն յօրն կատարի :

Յասներկուերորդ

Օրն չէ բարի . մի՛ երդնուլ և մի՛ երդումն տալ . յամենայն իրաց պատրաստ կաց . աղօթեա՛ . զի այն օրն պահպանութիւն է . հիւանդն գտանի . երազն երեք օրն կատարի :

Տասներեփերոյ

Օրն՝ բարի է ամենայն իրաց . գործել . հիմն արկանել . հարսանի առնել , որ ծնանի խմաստուն լինի . հիւանդն խտախ . երազն ի բարին կատարի :

Տասնչորրորդ

Օրն՝ հնազանդութիւն է ամենայն իրաց . մի՛ ինչ գործել . որ ծնանի չարեաւ մեռանի . հիւանդն նեղութիւն կրէ . զի Քրիստոս յայն օրն խաչեցաւ . երազն քառասուներորդ օրն կատարի :

Տասնեփեցերոյ

Օրն բարի է ամենայն իրաց . որ ծնանի զօրաւոր լինի . որ հիւանդանայ յառնէ . զի Քրիստոս այն օրն աւերեաց զդժոխսն , շինել , անկել վաճառել բարի է . զոր ինչ գործես շնորհաւոր լինի . կորուսան գտանի երազն յօրն կատարի :

Տասնեօթերոյ

Օրն՝ բարի է . հիմն արկանել . պատերազմի . հիւանդն ամբողջ կլանել . երազն յօրն կատարի .

Տասնուփերոյ

Օրն՝ բարի է հարսանիս առնել . ի ճանապարհ երթալ . զի Քրիստոս այսօր աղատեաց զհոգիսն . որ ծնանի զբախտս լինի . հիւանդն ողջանայ . երազն բարի է :

Տասնիմներոյ

Օրն՝ բարի է ամենայն իրաց . սերմանել . անկել . մանուկ յուսումն տալ . յաւազ մտանել . զի Քրիստոս յայն օրն պատուեցաւ . որ ծնանի բախտաւոր լինի և հանճարեղ , բայց արբեցող և լեղուաւ վատ և շնացող . զի սկիզբն Կայէնէն է դատերաց նորա : Հիւանդն մեռանի , ի թընամեաց պատրաստ կաց . երազն ի բարին կատարի :

Քսաներոյ

Օրն՝ բարի է ամենայն իրաց . զի Աստուած յայն օրն երեւեցաւ Աբրահամու և օրհնեաց զնա . սերմանել , շինել . վաճառել . ի ճանապարհ երթալ . յաւազ մտանել՝ և ամենայն ինչ գործել բարի է . որ ծնանի խոնարհ լինի և աղօթասէր . բայց ի հուր անկանի կամ ի ջուր . զի Աստուած յայն օրն այրեաց զՍոդոմ . հիւանդն վաանգի . երազն սուտ է :

Քսանմէկերոյ

Օրն՝ չէ բարի . մի՛ ինչ գործել . զի պապանձումն Զաքարիայի է . Մի՛ վաճառել . մի՛ գնել . մի՛ երդնուլ . մի՛ երդումն տալ . հիւանդն նեղի կամ մեռանի . որ ծնանի աղօթասէր լինի . երազն սուտ է :

Քաաներկուերոց

Օրն՝ մի՛ ինչ գործել մեզս որ չփաթերակիս . բայց հիմն արկանել՝ վաճառել , գնել , մանուկ տալ յուսումն և ամենայն ինչ բարի է գործել . որ ծնանի՛ յերկարակեաց լինի և աւագաց սիրելի . զի յայն օրն հրաման ետ Տէրն Փարիէլի աւետիս տալ Սրբոյն Կուսին Մարիամու . հիւանդն լաւանայ . երազն ի բարին կատարի :

Քաաներեհերոց

Օրն՝ բարի է ամենայն իրաց , զի Քրիստոս աշակերտացն երեւեցաւ . որ ծնանի բախտաւոր լինի , առատամիտ և յաջողակ . ի ճանապարհ՝ երթալ , գնել , վաճառել բարի է . փախուցեալն դայ . կորուստն գտանի . հիւանդն մահաւոյթ , երազն յերեսուն օրն կատարի :

Քաանելչորոց

Օրն՝ չէ բարի , պատրաստ կաց յամենայն իրաց . ո՛չ ի ճանապարհ գնալ . ո՛չ վաճառել և ո՛չ գնել . և ո՛չ ալ յաւագ մտանել . որ ծնանի անօգուտ լինի և անվաստակ . փախուցեալն դառնայ . զի յայն օրն աւերեցաւ Երուսաղէմ . երազն սուտ է . հիւանդն ողջանայ :

Քաանեհիցերոց

Օրն՝ պահպանութիւն է ամենայն իրաց . մի՛ երդնուլ . մի՛ երզումն տալ . և մի՛ ուրեք գնալ , զի չար է . և յայն օրն ծնանի նեւն . որ ծնանի չէկ լինի , շատամօրուս և ցանկացող . փախուցեալն դառնայ . հիւանդն մեռանի . երազն սուտ է :

Քաանելեցերոց

Օրն՝ բարի է ամենայն իրաց գործել . բայց մի՛ երդնուլ . որ ծնանի չուտ մեռանի . փոխ առնուլ . սերմանել . ի ճանապարհ՝ երթալ . հարսանիս առնել . կորուստն գտանի , զի Քրիստոս յայն օրն ծնաւ . հիւանդն վտանգի . երազն բարի է :

Քաանեւօքերոց

Օրն՝ բարի է ամենայն իրաց . զի Արքանամ յայն օրն պատարագեաց զորդին իւր . և մանանայն յայն օրն տուաւ Իսրայէլի . որ ծնանի կարգաւոր լինի և երկիւղած յԱստուծոյ . կորուստն գտանի . հիւանդն ողջանայ . փախուցեալն դառնայ . երազն սուտ է :

Քաանուրերոց

Օրն՝ բարի է ամենայն ինչ գործել . մանուկ յուսումն տալ . առ աւագ մտանել . որ ծնանի գեղեցիկ և շնորհաւոր լինի . կորուստն ոչ գտանի . հիւանդն ոչ ապրի . երազն երեք օրն կատարի :

Քաանելիներոց

Օրն՝ բարի է ամենայն ինչ գործել . սնկել , շինել , հարսանիս առնել .

որ ծնանի բախտաւոր լինի և հանձարեղ, բայց արբեցող լեզուան սիրելի և գործովքն չնացող. հիւանդն մեռանի. երազն լաւ է:

Մրեմեմորդ

Օրն՝ բարի է ամենայն իրաց. կնքել, պսակել, հիմն արկանել. ի ճանապարհ գնալ. զի այլազգիքն յայն օրն դարձան, հիւանդն ողջանայ. կորուսան գտանի. բայց ի նաւ մի՛ նստիլ. որ ծնանի՝ արբեցող և բախտաւոր լինի. երազն բարի է:

Բ.

**Ի ՎԵՐԱՅ ԵՕԹԵ ՄՈՒՈՐԱԿԱՅՆ, ՀԱՆԳԵՐՁ ԿԱՂԱՆԴԱՑՈՒՑԻՒՆ
Ի ՄՆԵՅՅԵԱԼ ԱԻՈՒՐԲ ՄԱՆԿԱՆ**

Արեգակ

Արեգակն իբր թագաւոր և ուղղաւորիչ մղար աստեղաց զի ունի գաստողականութիւնս քան զայլսն: Օր արեգականն է կիրակի. ցերեկեան և երեկոյեան առաջին ժամն: Կաղանդի օրն եթէ ի կիրակի հանդիպի, ձմեռն լինի սաստիկ ցուրտ. գարունն բարեխառն. ամառն՝ չոր և սակաւակուծ. աշունն հողմային: Ռոճիկն առատ. այսինքն գարի, ցորեան, գինի, ձէթ և մեղր. ոչխար և անդեայք: Փասքսութիւն ի մէջ ազնուաց, և քսութիւն ընդդէմ մեծամեծաց, մահ տղայոց և մանկամարդաց: Մընեայն ընդ իշխանութեամբ արեգական, լինի մեղ, շառագոյն, լայնաճակատ, բարակ՝ ունք, աչեղ, յարմարաքիթ, միջակարեբան, միջակապըռունգ, յարմարակզակ. կարմրայտ և գեղեցկադէմ: Բարուքն ծանր, համեստ, առատասէր, խորախոն, պատուասէր և քաղցրարան:

Լուսինն

Ունի զանազան արարս. մանաւանդ յաճին և ի նուագին: Նոյնպէս մեասական համարի յաճման լուսնոյն՝ զկենդանիս կրտսին, զարմտիս հաւաքեն. զուզակցութիւն ամուսնացելոյն. և այլ սոցին նման արք և արարք. իսկ ի լրմանն շահեկան և պիտանի: Օր լուսնոյն է կրկուշարթի և նոյն աւուր ցերեկեայ և գիշերեայ առաջին ժամն: Կաղանդի օրն եթէ յերկուշարթի հանդիպի, ձմեռն բարեխառն, գարունն զովական, ամառն միջակ և ագնիւ, աշունն յոյժ խոնաւ, որ ջուրք բնաւ ոչ պակասին: Յորենոյ պակասութիւն, բայց սերմանց առատութիւն, գինի և ձէթ միջակ, սարսուելի նուազութիւն անասնոց, հիւանդութիւն մարդոց. փեռեկտութիւն ի մէջ մեծամեծաց, արգանդացաւ կանանց. սլակասութիւն ասպրջմի և մեղեր: Մընեայն ընդ իշխանութեամբ լուսնոյ՝ լինի սպիտակամարմին, մաղաստո, նեղակզակ, բոլորադէմ, ատամիայարմար, միջակաչեայ. քնափ, փոքրարեբան, գաղտերակ, հաստաթիկունք, երկայնարազուկ, յամրաշարժ, սպիտակամազ, լայնաճակատ, նստաքիթ, բացերես, փոփոխական, դիւրօշիւանդ, երկրասէր, ջրասէր, վաւաշոտ:

Հրատն

Պատճառէ զանազան փոթորիկս, սառնամանիս, այեկոծութիւնս, և զայլ օղային պղտորութիւնս, երբեմն և սաստիկ ջերմութիւնս, ծանր հիւանդութիւնս. և չարժէ զանձինս ի խուփութիւն, ի վիճաբանութիւն, յապտամբութիւն, յարիւնհեղութիւն, և յայլ բազմատեսակ թշնամութիւն: Օր Հրատին է երեքշաբթի և նոյն աւուր ցերեկեան և երեկոյեան առաջին ժամն: Կազանդի օրն եթէ յերեքշաբթի հանդիպի, ձմեռն լինի ցրտային, անձրեւային: Խաւարչուտ և շատածիւն, գարունն գիջային, ամառն ջեր, աշունն չոր: Առաջակայ տարին լինի ծովու այեկոծութիւն, նաւարեկութիւն, նուազութիւն ցորենոյ և այլ արմատաց, միջակութիւն մեղեր, ձիթոյ և մրգաց, առատութիւն մալի և հունդ սերմանց, պակասութիւն գինւոյ, մահ մանր կենդանեաց, նաև էգաց առաւել հիւանդութիւն և մահ քսն թէ արուաց, Երեւի թէ ոչ սակաւ ազնուապատիւ արք, մահուամբ կիեանս փոխիցեն: Մնեայն ընդ իշխանութեամբ Հրատին լինի թխամարմին, շառատեսիլ, ոլոր և փոքրամազ, հրաչեայ, մեծապինչ, սակաւածորութեւ և անյարմարատամն, սրտմտոզ, չարաբարոյ, չարահնար, չարախնդաց, լեզուագար, կամապաշտ, թերահաւատ, արիւնարբու, ամբարտաւան, իգամոյ, խարեբայ, ստերզմեռայ, անգութ, յափշտակող, թշնամի խաղաղութեան, և անյագ ի վնասահարութեանէ:

Փայլածուն

է այլայլուն, փոփոխական և երկարուն, ընդ բարւոյն բարեբարոյ, ընդ չարւոյն չարաբարոյ: Փայլածուն է չորեքշաբթի, և նոյն աւուր առաւօտեան և երեկոյեան առաջին ժամն: Կազանդի օրն եթէ ի չորեքշաբթի հանդիպի ձմեռն դժուար լինի, բայց ոչ սաստիկ ցուրտ, գարունն գէճ և ոչ գովելի, ամառն քաջալեր և ազնիւ: Միջակ ցորեան և այլ հունդ, կութ գինւոյ, ձիթոյ. մեղեր առատ, բայց ի տեղիս տեղիս սղութիւն ոտճկաց և երեւի թէ յաշնանն իցէ մահ գլխաւոր արանց, կեւրութիւնք, կողացաւութիւնք, գլխացաւութիւնք, վիժածք և նոր համբաւք: Մնեայն ընդ իշխանութեամբ փայլածուն մաղասամակար լինի, ծանր և փափկամարմին, ունայնախոն, երկրասէր, քաղցրախօս, յոժարածիծաղ, մարդեկոյզ, հպարտ, ստասաց, խորամանկ, նեղաճակատ, երկայն ունք, սոււաչեայ, յարմարաղէմ, նեղաքիթ, հաստաշուրթն, յարմարակզակ և սիրող սեւ զգեստուց:

Լուսնրագն

Պատճառէ բարեկամութիւնս, խաղաղութիւնս, հանդարտութիւնս և ջերմեռանդութիւն, մտնաւանդ ի մանկութեան հասակս, իշխէ ի վերայ խոհեմ, համեստ, ամօթխած, ներհուն, ազատաբարոյ, զուարճամիտ և բարեպաշտ անձանց: Օր Լուսնթագին է հինգշաբթի, նոյն աւուր առաւօտեան և երեկոյան առաջին ժամն: Կազանդի օրն, եթէ ի հինգշաբթի հանդիպի, ձմեռն անուշ, գարունն հողմոտ, ամառն ցանկալի, աշունն

անձրեւային: Առատութիւն ցորենոյ, ոռճիկի, մրգաց, արմտեաց, գինւ-
 ւոյ և ձիթոյ: Մնեալն ընդ իշխանութեամբ յուսնթագին՝ լինի գեղեց-
 կահասակ, կարմրախայտ, փափկամիտ, հաստերակ, բարեձեւ, միջա-
 կամամեայ, գորշաներ, մեծածակատ, մեծարերան, մեծակոկորդ,
 հաստաքիթ, սեւաչեայ, առամնախիտ, լայնածնօտ, լայնակուրծ, և լայ-
 նաթիկունք: Բարուքն լինի հանդարտ, համեստակենցաղ, բարեհաճոյ, ան-
 պատիր, հաւատարիմ, ժուժկայ, ընդունակամենայն բարեաց և հանճարոյ:

Լուսարեւի

Որ և գիշերավար ձայնի՝ իշխէ ի վերայ կանանց, երախայից, երա-
 ժտաց բարերախտ և զարդարուն անձանց. օր Լուսարեւին է ուրբաթ.
 Ժամն նոյն աւուր առաւօտեան եւ երեկոյի առաջինն, ձմեռն ծանր և սաստ-
 կութիւն դառն ցրտոյ. գարունն հողմոտ, ամառն գէճ և անուշ, աշունն
 մասամբ չոր, մասամբ հողմակոծ և անձրեւային, ապրուստն առատ թէեւ
 ծանրագին, կուլն շատ եւ լաւ, երեւի նշան աչացաւութեան, ծանր տագ-
 նապ մեծանուն և պատուական անձանց, տարածայնութիւն յայլ եւ այլ
 կողմունս աշխարհի և ի տեղիս տեղիս գեանաչարժութիւն: Մնեալն ընդ
 իշխանութեամբ յուսարեւին, լինի բարձրահասակ, զուարճերես, աչեղ,
 ծիծաղագէժ, հերատարած և արծուաքիթ: Բարուքն ճարտարարան, խոհեմ,
 գթոտ, սիրելի, համեղախօս, զրօսասէր, իգասէր և առփածան:

Ծրեակի

Պատճառէ գերկս և զաշխատանս սով և զմահ, զանձկութիւն,
 զաւերածութիւն և զսոցինասարաս թշուառութիւն: Տիրէ ի վերայ ծե-
 րոց անկերոց, և առանձնացերոց, զոչաքաղ, վայխակեր, կախարդ, զծուծ
 և մտայոյզ անձանց: Օր երեւակին շարաթ, ժամն առաւօտեան և
 երեկոյեան առաջինն: Կաղանդի օրն եթէ ի շարաթի հանդպի չորութիւն
 և սղութիւն, ձմեռն երկար, հողմակոծ, սարսուռ և սակաւիկ անձրեւային,
 գարունն հոսէ, ամառն գէջ, աշունն չոր և հով: Բազմատեսակ ամուս-
 նութիւն, անկումն հին տանց, երեքօրեայ և չորեքօրեայ տենդ, մաճե-
 րոց, անկերոց, ոչխարաց և ապրշմագործ որդանց: Մնեալն ընդ իշխանու-
 թեամբ երեւակին լինի սեւամաղձեայ, թխաղէժ, մեծակզակ, մազոտ, հաս-
 տապուռնգ, ջլոտ և նեղակուրծ: Բարուքն ազան, խորախոհ, մտայոյզ յար-
 մարաշարժ, նենգժոտ, բղջարիտ, առանձնակեաց և սիրող սեւա հանդերձից:

Գ.

Ե Ր Ա Չ Ա Հ Ա Ն

Ա.

Աստուած Տեսնուլն Յերազի՝ լաւ է տեսնողին. և յամէն չարէ ազա-
 տի և հարկիքն աւելանայ. և ի դիտանէ խալիսի, թէ աղքատ է՝ հարըս-
 տանայ. թէ հիւանդ է՝ ողջանայ: Աստուած ՚ի տան քում տեսանել՝ նո-
 րողութիւն է: Աստղ տեսանել լաւ է: Աստղն՝ յիւր տանն տեսանել՝ իւր

տանն բարիքն աւելանայ . թէ օտարական լինի՝ խաղաղութեամբ ի տուն երթայ : Աստեղք տեսանել՝ ՚ի ճանապարհ երթայ և շահի : Աստեղք յերկնից անկեալ տեսանել՝ մեծամեծաց մահ է և կորուստ : Ասպար առնուլ տեսանել՝ զիրն կամ զայլոցն՝ պատիւ է : Ասպարն՝ որ է զալխանն՝ երկրի տիրանայ :

Արեղայ տեսանելն՝ փառք և պատիւ է . կամ կռիւ :

Ագաղաղն՝ ՚ի պատարագ բարի է . և կուռոյ նշան է : Ագուաք տեսանել՝ թշնամիք արձակին ի վերայ քոյ . աղօթք արա՛ որ ազատիս :

Աթուռն՝ մեծութիւն և բարձրութիւն է : Աթուռ նստիլն՝ բարձրութիւն է : Այեւոր զինքն տեսանել՝ հարստութիւն է և շահ : Այլւրն՝ շահ է իրաց և բարոյ : Այլւրն՝ ուժ է : Այլւր՝ ամանովն , ըզգակ է :

Ակներ տեսանես կամ քար՝ աղախին է և ծառայ : Ականջն՝ յերազի , աղջիկ է և կնիք և աւետիս :

Աղանիս՝ շնորհք է : Աղուէսն յերազի՝ ան է և երկիւղ և իլլաթ : Աղուէսն՝ թշնամի է . որ թէ որսաս զաղուէսն , զթշնամիդ յաղթես : Աղուէսն թէ ՚ի մարդոցն փախչի . իւր պարտականն յիւրմէ փախչի : Աղուեսի հետ թէ կռիւ անէ , հետ իւր կարեւորին կռիւ անէ : Աղուեսի հետ թէ խաղայ , ազվոր կնկան ծանօթանայ : Աղջիկ իւր ծոցն՝ խնդութիւն է : Աղջիկ փոքր շատ շահ է և բարի : Աղջիկ երեսայն ցնորք է և նեղութիւն : Աղջիկ տեսնուլն՝ ամէնն լաւ է . և կին տեսնուլն՝ լաւ է և խնդութիւն . և իւր սրտի կամքն կատարի : Աղբիւրն՝ իրաց շահ նշանակէ . Աղբիւրն լըւացիլի՝ շահ է : Աղբերէ ջուր առնուլն՝ վատ է : Աղբերէ ջուր խմելն՝ շնորհք է : Աղն և աննուխն՝ անոյ խօսք է և բարի : Աղ տեսանել՝ կսկիծ է : Աղ սպիտակ տեսանես՝ դրամ է և շահ : Աղ սեւ տեսանես՝ վատ խօսք է և տրամութիւն : Աղ կտրած տեսանես՝ կռիւ խափանի : Աղի ձուկն՝ կսկիծ է և հոգս : Աղքն՝ չափովն շահ է տեսնողին : Աղքն մարդոցն՝ հարամ ոռճիկ է և շահ : Աղեղն՝ շատ զրոյց է և ճօշք և բամբաս : Աղեղնաւոր զինքն տեսանել՝ թշնամի և լեղու է : Աղիւս հանելն՝ տանն շինութիւնն է և լաւ : Աղքատին իրք շնորհելն՝ շահ է և բարի . և պարգեւ ՚ի յԱստուծոյ քեզ կատարեալ : Աղէկ հալան՝ շատ ժամանակ է՝ ուրախութիւն և շնորհք :

Ամանաթ առնուլն և պահելն՝ ըզորդութիւն է : Ամբաստանել զօք յերազի վնաս է խիստ և վատ . Աստուած օգնէ : Արմաւն՝ շատ բարի է և անոյ խօսք : Այծն և քօշն՝ ճանապարհ ցուցանէ : Այրեցեալ զհանդերձն տեսանել վնաս մահու է և երկիւղ : Այրել և աւիլել տեսանէ զատն իւր՝ ամենեւին պիղծ չար և վնասէ :

Անձրեւն՝ ժամանակ բարի է : Անդաստանն՝ վատտակ է և ժամանակ բարոյ : Անասունն հալալ ըռոճիկ է :

Անոյ ուտելու զինչ որ լինի՝ լաւ է և հալալ ոռճիկ . և անոյ խօսք է : Անուշահոտ իրքն լաւ է և հալալ ոռճիկ : Անկանիկ ՚ի գեան՝ թօթափի յրնչիցն և աղքատանայ :

Աչքն՝ գանձի շատութիւն է : Աչք բազում տեսանել՝ հարստութիւն է : Աչս մեծս ունիլ՝ կենաց յաւելումն է : Աչս հանելն՝ կինն կամ որդին մեռանի :

Ապարանջանն՝ նեղութիւն է և նոգ: Ապոճանն՝ հարկեւոր կնիկ է: Ապոճանն՝ այր մարդոյն պարտութիւն է: Ապոճառ տեսնու կին մարդ թէ այրի է, այր առնու. թէ այր ունի՝ տղայ լինի: Ապոչումն՝ լաւ է և ըռոճիկ և շահ: Ապաշխարողն իւր հաւատքն է:

Առիւծ տեսանել թագաւոր է լիրբ. կամ աւագ իշխան՝ և մեծ մարդ: Առիւծք երկուքն ընդ միմեանս կռւին, բազում թագաւոր՝ կամ բազում մեծ մարդիկ կռւին: Առիւծին հետ կռւիս, ընդ մեծ մարդոց կռւիս. կամ ի կռիւ անկանիս: Առիւծին վրայ նստած լինիս և քչես, նա դու ի պարտութեան վարիս: Առիւծէն թէ փախչիս՝ և առիւծն յետեւէդ չգայ, ՚ի չար կամէ անհոգանաս: Առիւծն ՚ի դէմդ ելանէ և հրոտնայ քեզ՝ նա ա՛ն հասանի քեզ ՚ի մեծ մարդոյ: Առիւծն անամօթանայ, թշնամի արձակի յերկիրն այն: Առիւծի միս ուտել յերազի, ՚ի չար կամէն բարի գայ իւրեան: Առու տեսանելն ՚ի տան քում, գանձ է և շահ: Ատամուռն քն ազգերն է: Ատամուռն ամէնն ընկնիլ շատ գանձ գտանէ: Ատամն առաջին ընկնի, իւրն սուգ հանդիպի, կամ ի ճանապարհ երթայ: Ատամուռն առաջինս հանել՝ որդւոց մահ է: Ատամուռն ներքինս հանել՝ արտմութիւն է: և թէ վերինս՝ ազգական մեռանի: Ատամուռն մեծս հանել մօտեւոր ազգական ոք մեռանի: Ատամուռն սրբելն զայլոց վաստակն ուտել: Ատամուռն սեւացեալ հիւանդութիւն է: Արեգակն տեսանել՝ թագաւոր է: Արեգակն յիւր ձեռքն տեսնուլ՝ պարտութիւն է տեսնողին: Արեգակն խաւար տեսնուլ՝ այն տեղոց պարտին չար գայ: Արեգակն յիւրում տեղւոջ տեսնուլ թագաւոր մեծ է: Արեգակն յերկնից անկեալ տեսնուլ՝ թագաւորաց մահ է: Արեգակն ՚ի կռմանէ տեսանել՝ նեղութիւն է: Արեգակն ՚ի ներքոյ ամպոյ տեսանել՝ երկրի նեղութիւն է՝ կամ պայծառութիւն: Արեգակն և լուսինն ըստ իրեանս ընթանալով տեսանել թագաւորք են և կռիւ և հիւանդութիւնք ցո՛ւցանեն: Արեգակն և լուսինն այսր անդր ընթանալ տեսանել բաժանումն է երկրի: Արեգակն և լուսինն նորին՝ բաժանիլ երկրի է:

Արծաթ սուրբ և յիստակ տեսանես՝ հաւատք է: Արծաթն՝ կամ նեղութիւն և ծանրութիւն է: Արմաւենին՝ զուակ է և ուրախութիւն: Արմաւենի ծառն՝ քան զամէն ծառ լաւ է: Արիւն հեղուն՝ վրաս մեծ է և զեն: Արիւն տեսանել կամ արիւն առնուլ՝ շնորհք է: Արծիւն յերազի աւագ է և մեծ պարն: Արծո՛ւոյն վրայ նստիս՝ պարտութեան տիրանաս: Արծո՛ւոյն հետ կռւիս կամ զարնես, հետ մեծ մարդկանց նախանձիս և կռւիս:

Արծիւն զքեզ զարնէ, ի պարտնէ զեն հասանի քեզ, կամ լեզուով անհարկութիւն: Արմաւք հաւք տեսանել կնիկ է հարկեւոր, զեղեցիկ և շնորհօք: Արջ տեսանես՝ անիրաւ և անգէտ մարդոց խօսք է. և ամէն գէշ զազան՝ թշնամի է:

Աւետարան տեսանես՝ հալալ մուրառ է: Աւաղ տեսանես, հալալ ուճիկ է և շահ: Աւագերէց մեռած կենդանացեալ տեսանել՝ մեծ զրոյց կենդանանայ: Աւագակ տեսանես՝ զգուշացիլ ի կռւոյ: Աւագ զինքն տեսանել՝ բարի է և խիստ լաւ: Աւագ տեսանել՝ թշնամի արձակի յերկիրն: Աւագ տեսանել կամ խօսիլ՝ շնորհք է և բարի: Աւրէզն սր է սուլուխ շատ գանձ է:

Բ.

Բառնայ զինքն յուժեքէ տեսանել՝ շահ է և բարի: Բառնայ և ընկե-
նուլ զինքն յուժեքէ՝ ֆեսս մահու է: Բարձր տեղաց ընկնիրն՝ չէ բարի,
ֆեսս է: Բարձր տեղաց վրայ քայլես՝ մեծութիւն գտանես: Բարբառոսի
ձայն լսես և այլ սաղերու՝ անոյշ խօսք է: Բարև տալ յերազմի՝ կոխ է:
Բազայ տեսանել՝ որդի է և մեծութեան նշան. կամ լաւ մարդ է: Բազուկ
ազնիւ տեսանել՝ շահ գուշակէ: Բազուկ աղտեղի՝ զգուշացիր՝ ի մեղաց:
Բազնիք տեսանել՝ հոգս է: Բազնիք երթաս՝ ՚ի պատրանք անկանիս:
Բազնեց դուրս գաս՝ ՚ի հոգոց ազատիս: Բազնիք յուժացուիլն՝ չարչարա-
նօք ըռոճիկ է: Բազանիս յուժացվիրն կամ մէջն կենայն՝ մեծ նեղութիւն
է: Բաղ տեսանել՝ մեծ մարդ է: Բակ շինելն կամ հիմն արկանելն՝ բա-
րութիւն է: Բահն՝ լեզու է: Բանպակ տեսանել՝ արդարութիւն է և սրբ-
բութիւն: Բանճար տեսանել՝ շահ է: Բանճար աւեր տեսանել՝ չէ լաւ:
Բաշկուլն՝ չէ աղէկ:

Բեւեռ ժողովելն՝ լեզուք է: Բեւեկն տեսանել կամ ժողովել՝ մեծ
բարութիւն է: Բերդ տեսանես՝ ի վերայ թշնամեաց իրաւանաս: Բերդ
մտանելն ամբութիւն է և պարիսպ: Բերդ աւերելն, ի նեղութենէ ազա-
տիս: Բերանն ձեռնտուութիւն է: Բերանոյ ցամաքիլն՝ իւր ուժիկն պա-
կասի:

Բիր տեսանես կամ առնուս եղբայր է կամ որդի: Բիր կտարելն՝ եզ-
բայրն մեռանի կամ ազգականն: Բլուր տեսանել՝ երկրի շինութիւն է և
խաղաղութիւն:

Բու տեսանել՝ նեղութիւն է: Բուրվառ առնուլն կամ շարժելն չէ
աղէկ. կոխ է: Բուրդ սպիտակ տեսանես կամ առնուս՝ մեծ առողջու-
թիւն և հայալ ուժիկ և շահ է: Բուրդ սեւ սուգ է և լաց: Բուք ար-
կանելն՝ ձայն գուժի գայ յերկիրն: Բոզ կնոջ խօսիլն փառք է: Բոզ տե-
սանել կամ խօսիլ կամ խաղալ՝ շահ է: Բոկիկ զինքն տեսանել՝ զեն գայ
իւրն: Բորոտ զինքն տեսանել՝ դանձն շատանայ. մեծութիւն և շահ է:
Բորակ տեսանել կամ ժողովել, կսկիծ է: Բողկ ուտելն առողջութիւն է
և շահ: Բրինձ տեսանել՝ շահ է և բարի: Բրել կամ գործել՝ մեծ բարու-
թիւն է և շահ:

Գ.

Գառիս տեսանել՝ շահ մեծ է: Գառիս զենելն՝ չէ բարի: Գառիս
յուժանալ զեն է և տրտմութիւն: Գազան տեսանել՝ կոխ է և երկիւղ առանց
ֆեսսու: Գազան շատ տեսանել՝ ահ է: Գազանն որ գոչէ՝ երկրի նեղու-
թիւն է: Գազանի խաղայն՝ թշնամոյն հաշտութիւն է: Գազանի փախչիլն՝
խաղաղութիւն է: Գարանքն՝ աւազ է և մեծութիւն: Գանձ տեսանել՝
կամ առնուլ՝ շահ է: Գանձն և կուժանն իխտ աղէկ է: Գարի տեսանել՝
ըռզակ է. գարի սերմանել կամ ժողովել՝ ուժիկ է: Գայլ անամօթ տեսա-
նել՝ թշնամի է. գայլն թէ սպանանես՝ զթշնամիդ յաղթես: Գայլուն զար-
նես և չի մեռանի, նա հեռ կնոջ մեղք գործես. և թէ մեռանի, քո բանն
՚ի բարին յաջողի. գայլի միսն թէ ուտես, ՚ի մարդայ հարամ ուտես: Գայ-

յագուան՝ անհաւատ մարդ է: Գաւազան տեսանել՝ ամբաստս ընդդէմ թշնամուրն. գաւազանն ի ափին լաւ է. գաւազանն ի ձեռին որդի է. կամ շահ մեծ: Գաւաթ բռնել ի ձեռքդ՝ գաւակ խնդման է:

Գեա և հեղեղ ելանելն յերազի՝ հեծելի նշան է: Գեա անցանելն հեծել է: Գեա յտակ հայիցն առատութիւն է. գեա պղտոր լիութիւն է: Գեա լուացոյիցն՝ նեղութիւն է: Գետինն ի վայր երթալն՝ թշնամին յալթէ զինքն: Գերի տանին նեղութիւն է: Գերի զինքն տեսանել՝ մեծութիւն ի և ի նեղութենէ ազատի: Գերանդին մեծութիւն է և շահ: Գերանն որ կտորի՝ տանուէր մեռանի և վնաս է: Գերեզման բանայն վնաս է: Գերեզման զինքն դնելն վաս է: Գեղեցիկ պատկերօք զինքն տեսանել՝ փառք է: Գեղեցիկ պատկեր նկարած տեսանել՝ նոյն է: Գէշ հոտ առնուլն գէշ խօսք է: Գեր զինքն տեսանել՝ տղայոց ածումն է:

Գինի անսպակ տեսանելն կամ խմելն և կամ գնելն՝ ուժ է և շահ: Գինի դեղով խմելն հարամ ուճիկ է: Գինձ տեսանել անոյշ խօսք է: Գինձ ուտել կամ ժողովելն՝ կուի է:

Գինտ հագնիլն՝ մեծ շահ է: Գինտ հանելն յախանձէն՝ վնաս մահու է: Գիշերի ՚ի ճանապարհ երթալն՝ նեղութիւն է: Գիտաւոր ասող տեսանել՝ մեծութիւն և պատիւ: Գիրք կարդալն՝ ժողովք ցուցանէ. գիր տեսանել կամ կարդալն՝ իւր մարմնոյն նեղութիւն է, և ցաւ. գիր գրելն՝ բարի և հալալ մուրատ է:

Գլխակ զինքն տեսանել՝ վնաս մահու է. գլուխն յանձնէն ՚ի զատ տեսանել՝ յօտարութեան երթայ, գլուխ կարած ՚ի ձեռքն առնուլ՝ շատ գանձ գտանէ: Գլուխն դեղ քսելն՝ անոյշ խօսք է: Գլուխդ ամիլես՝ յամէն նեղութենէ ազատիս: Գլուխն այոց ամիլելն՝ ցաւուն դժար զերծանի: Գլուխ լուանալ կամ գլխաւոր տեսանելն, զեն ցուցանէ: Գլուխի սպիտակն՝ յանկարծ շահ է: Գլխոր տեսանել՝ ցնորք և աղքատութիւն է: Գրնտի խաղալն՝ պարոնին լաւ է. փոքր մարդոյ գէշ է:

Գոթի զքեզ տեսանելն հարստութիւն է և լաւ: Գոմէշ տեսանելն շահ է և ուրախութիւն: Գոմէշ ի գետին. գոմէշ ի գետն բարի զրոյց գայ իւրեան: Գոմ շինելն շահ է և ուրախութիւն: Գոյնզգոյն հալուն՝ խնդութիւն է: Գորտ տեսանել հաւատացեալ մարդ է. գորտ շատ հաւատացեալ մարդիկք են. գորտայն ձայն լսելն՝ խնդութեան զրոյց գայ. գորտն թէ սպանանես, հետ հաւատացեալ մարդոց հաշումն առնես: Գիտակ հագնիլ տեսանել՝ հարկիք է: Գրաւական հանել ի տանէն, վնաս մահու է: Գրող տեսանել՝ մահն մօտացեր է: Գրիչն ու կաղամարն իրիցուն խելք է կամ ճանապարհ. գրչի ամանն կին է:



Դահեկանն յուճեքէ ՚ի յինքն առնուլ և տեսանել՝ շահ է. կամ կին առնուլ և տղայք վաստակի: Դամոնն՝ հիւանդութիւն է: Դանակ տեսանել կամ գնել՝ չէ լաւ. վատ լեզու է: Դանակ կորուսանես՝ լեզու խափանի: Դանակ շինողն՝ հիլլայով մարդ է: Դաշտ տեսանել՝ ահու բան առնես: Դաշտէն ՚ի դուրս՝ գաս՝ ՚ի նեղութենէ ազատիս: Դատաւորն՝

Աստուած է: Դատաւորն տեսանել՝ պարտնին պարտութիւն յաւելանայ: Դատաստանն՝ մեղաց քննութիւն է: Դարպաս շինելն, կամ դարպասի դուռ շինելն, դարպաս տեսանելն՝ հարուստ կին է: Դարպաս լայնացեալ պարտութիւն է: դարպաս փակելն՝ մեծ մարդ անկանի: Դարպասն ի թագաւորէ՝ պատիւ է: Դարբին տեսանելն մեծ մարդ է: Դարբութիւն թէ ինքն առնու, լաւ տանուտէր լինի: Դարբնի սայլն և կռանն՝ պարտութիւն է: Դարբնի սարուածն զինչ որ լինի՝ ամենն բարի է:

Իեկանն ի յայլ մարդ տայ, կամ կորուսանէ, կամ գոչանան՝ ամէն հոգոց ազատի. թէ հիւանդ է ողջանայ: Իեկան ու դրամ թէ աչունն տեսնուս, արիւնհեղութիւն է, և թէ ի գարնան ժամանակի տեսնուս՝ բոր և ծաղիկ է: Իեղին պղինձն հաճոյ է որ կատարի: Իեղին սեխն. դեղին հարաւն, դեղին ձի հեծնուլն՝ դեղինն ամենեւին վատ է և հիւանդութիւն: Իւ տեսանել՝ վիսա և նեղութիւն և մեղաց նշան է:

Դդուժ տեսանելն՝ հիւանդին լաւութիւն է: Դդուժ ցանելն ջերմ է և ուտելն հիւանդութիւն: Դի տեսանես զրոյց բարւոյ է: Դիպակ տեսանել կամ ազանիլ՝ մեծ պատիւ է: Դմակ տեսանել կամ ուտելն հիւանդութիւն է կամ անհոգութիւն:

Դուռն տեսանել կամ առնուլ պատիւ է և հետ մեծ մարդոց ծանօթանայ: Դուռ բանայն իւր բախտն բացվի և իւր կամքն կատարի: Դուռ ձգելն մեծ մարդ անկանի և կործանումն է: Դուռ կտրելն մահու նշան է: Դուռ ելանելն չէ բարի: Դուռն տեսանել պատիւ է: Դրամ տեսանել կամ ժողովել ազանութիւն է: Դրացնին բարեւ տալն կուի է:

Ե.

Եզն տեսանել՝ ահն գնայ: Եզն նստման՝ անհոգութիւն է. կամ մեծ աւետիս գայ. կամ զուգակից սիրելի: Եզին միան ուտելն՝ աղէկ է. ումանք ասեն թէ նեղութիւն և հիւանդութիւն է: Եզինք և սայլք՝ նեղութիւն է: Եզանց կովին՝ երկրի ահ է կամ թշնամի: Եզն մորթել՝ վիսա մահու է:

Եկեղեցի տեսանելն կամ շինելն՝ փառք է, բայց ոմանք ասեն թէ՝ նեղութիւն է: Եզ ուտելն՝ բարի է: Եզնիկն ի տան տեսանելն զուգակից է. կամ սիրելի գայ իւրն: Եզջերուն՝ երկրի նեղութիւն է:

Երգէ՛ոնն արտմութիւն է: Երկիրն՝ խնդութիւն է: Երկանք աղալն կամ տեսանելն, անհանգստութիւն է:

Երկաթ տեսանել կամ գնել՝ արտմութիւն է և յոյժ վատ: Երկաթով ծեծին նեղութիւն է և ցաւ: Երակ առնուլն՝ սրբութիւն է: Երակ կտրելն՝ վիսա մահու է: Երես լուանայ տեսնել զէն է: Երես կարմիր՝ բանն աղէկ լինի: Երես դեղին՝ մեղք է: Երես աղէկ՝ մեծ փառք է:

Զ.

Զանգակի ձայն լսես յերազի՝ խնդումն է և ուրախութիւն: Զարտալու ուտելն՝ արտմութիւն է: Զաֆրանն՝ հիւանդութիւն է: Զաֆրանով կերակուրն՝ լաւ է: Զենելն՝ մեծ նեղութիւն է: Զինուոր տեսնել

պատրաստ կաց, զի տրտմութիւն է: Զմրութն՝ լաւ է հաւատքին և բանին: Զնտանն յերազի՝ մեծ հոգս է և սուգ: Զուռնայն կամ զձայնն լսել՝ անձրև է կամ կոխ: Զրոյց տալն՝ նեղութիւն և չարութիւն է: Զրեհն. պարոնութիւն է: Զըրիս հագնիրն՝ զէն է:

Է.

Էրէց մեռած տեսանել, մեծ զրոյց խափանի: Էրէց 'ի մեռելոց յառնել՝ հին խօսք 'ի զրոյց գայ: Էջ բազում տեսնել՝ նեղութիւն է: Էջ խառընչէ՝ նախանձ է: Էջ անամօթ, չէ աղէկ: Էջ զմեղուք ծամել, թշնամեաց կորուստ է: Էջ ճերմակ տեսնել՝ կամ 'ի յօտար, կամ բարձեալ և հեծեալ՝ բարի է և պատիւ:

Ը.

Ընդ իշխանան խօսիլ տեսնել՝ բարի է և յանկարծ շնորհք: Ընդ այլ ումեմն մարդոյ խօսիլն՝ շահ է և վառք: Ընդ այլ կնոջ խօսիլ տրտմութիւն է: Ընդ անօրինի խօսիլ՝ սրբութիւն է: Ընդ աղբի խօսիլն՝ չէ աղէկ: Ընդ կուսի հաց ուտելն՝ բարի է: Ընդ բող կնոջ ննջելն՝ վնաս է: Ընդ մօրն ննջել՝ անհոգութիւն է: Ընդ անասուն զմտաւ ածելն՝ վատ է: Ընտեկ գնան՝ բախտաւոր լինիս: Ընդ խաղաղ գետ անցանկն, չէ աղէկ: Ընդ պղտոր գետ անցնելն՝ նոյն է: Ըղունկն ունենալ՝ աղքատ է: Ընկզի ծառ տեսնել՝ աճամութիւն է: Ընկուզ ժողովելն, չէ աղէկ: Ըռումբն, երկիր է: Ըրախի խմելն ուրախութիւն է. բայց ոմանք ասեն թէ տրտմութիւն է:

Թ.

Թագաւոր ողջունելն կամ բարեւելն յերազի փառք է: Թախտն՝ մեծութիւն է: Թախտ կանանչ տեսնել՝ ցաւ է: Թամքարարն՝ իրաւարար մարդ է: Թանաք եփելն, լաւ է: Թանաք 'ի վերադ վաթես, գէշ խօսք է: Թարախով զինքն տեսնել՝ շահ է և հարստութիւն: Թարախն՝ թէ արիւնախառն ելանէ, 'ի մեղք գործ ժպրհի: Թաքստի զինքն տեսանել՝ բարի է: Թեւաւոր զինքն տեսնել՝ հոգոց զխալի: Թթու մածուն ուտելն հարամ ոտճիկ է: Թթի ծառն, հարուստ մարդ է: Թիւր՝ զինչ և իցէ, նեղութիւն է:

Թզի ծառն, լիրբ մարդ է: Թուզ դալար տեսանել կամ ուտել, վնաս է և փոշիմանութիւն: Թուզ չոր ուտելն՝ շահ է: Թուխ մօրուս ալուոր տեսնելն՝ շահ է: Թուխ զինքն տեսնել՝ մեծութիւն է անձինն:

Թռչիլն յերազի՝ յայլ տեղ երթայ: Թէ յիւր կտուրէն 'ի յայլ կտուր թռչի, նա իւր կիներն թողու և յայլ կին առնու: Թէ թռչի որ բարձրանայ, 'ի լաւութիւն հասանի: Թէ թռչունն յանձն քո մերձենայ, մարդ երանէ զքեզ: Թռչուն արձակելն, մեծ բարութիւն է: Թռչուն փախչիլն՝ մեծ վնաս է: Թռչնոց կուռիլն՝ վնաս է: Թռչունն թէ խաղայ ընդ քեզ, քո թշնամիքն սիրեն զքեզ:

Ճ.

Փամատուն զարդարած տեսնել՝ արքայութեան արժանի լինիս : Փամ երթալն , կեանքն բարի լինի : Փամատուն մասնեղն , հաւատքին լաւ է : Փամատունն աղօթելն , լաւ բան առնել է :

Փամ առնելն , աղէկ է : Փամահար տեսնել՝ դպրութեան հասանիս կամ նեղութիւնն է : Փուռ գալն , չէ՛ աղէկ : Փողովք տեսնել՝ ժխորումն է :

Ե.

Ի մանկութեան զինքն ալեւոր տեսնել՝ կենաց յաւելումն է : Ի յալեւորութեան զինքն մանուկ տեսանել՝ նո՛յն է : Ի ծովակի նստիլ՝ զուարթութիւնն է անձինն : Ի նաւ նստիլ , պատիւ է : Ի բարձր տեղուջ նստիլ , պատիւ առնու յաւազաց : Ի յանապատի նստիլ , հիւանդութիւն ցուցանէ : Ի բարբարոս նստիլ , նեղութիւնն է : Ի կին նստիլ , բարի է և լաւ : Ի ձի ճերմակ նիստիլ կամ Ի սև , պատիւ է և բարի : Ի ձի իմաստուն նստիլ , աւետիս է և շահ : Ի ձի վազան նստիլն՝ խիստ աղէկ է : Ի ձի գնացող նստիլ , շահ է : Ի սև ջորի և Ի ձի նստիլն , Ի մեծունաց շահ տեսանէ : Ի գայլ նստիլ , նեղութիւնն է : Ի կառ նստիլ , մեծ պատիւ է : Ի լաց նրստիլն՝ շատ նեղութիւնն է : Ի բարձր տեղուջէ անկանիլ՝ Ի փառաց անկանի : Ի յուծս դնել զեզինս՝ զրոյց է : Ի սերմանիս ձեռն արկանել կամ վարել՝ բարի է : Ի ջրհոր կամ Ի գետն անկանիլ , Ի նեղութիւն անկանի : Ի ջրհորէ Ի գետէ կամ Ի ծովէ ելանելն , պատիւ է և ազատութիւն : չեկանելն , վնաս մեծ է : Իրիցու խաչ առնուլն՝ արտմութիւնն է : Իրք մի ուղեն քեզանէ , պատիւ է : Ի գերեզման զինքն տեսանել , դատաստանաց հանդպի և զընտանի : Ի մեռելոց իրք առնուլն , շահ է և բարի : Ի մեռելոց պագ առնուլ . զեն և վնաս : Ի թուշման զինքն տեսնել՝ յայլ երկիր վարի և մեծութեան հանդիպի : Ի վայրի գազանէ հալածիլ , Ի զօրաւոր մարդոյ պատրամստ կացիր . կամ թշնամի յաղթէ քեզ :

Զ.

Լոյս տեսանես՝ Ի խաղաղութիւնն է : Լոյս չիջեալ՝ արտմութիւնն է առաջնորդաց : Լուսին և արեգակն տեսանես յայգին , վնաս է աղգին : Լուսնի աստղըն , խիստ շահ է : Լուսինք բազումք ածումն է երկրին : Լուսինն կարմիր , վնաս : Լուսինն խաւար՝ թագաւորի մահ է : Լուսինն բազում տեսանես բազում թագաւոր յառնեն Ի վերայ միմեանց : Լուսն , ռոճիկ է : Լուծ դնելն , վատ է : Լուծք եզանց , բարի է : Լեւան բարձր , արտմութենէ ազատիս : Լէ՛հէպն (վերմակ) հարուստ կնիկ է : Լիմոնն , անոյշ խօսք է :

Է.

Սաչակնքել զինքն տեսնել՝ մեծ պատուոյ նշան է : Սաչն՝ չարչարանք է : Սաչափարն՝ դատարկ մարդ է : Սաւարն , նեղութիւնն է : Սաւեարն՝ հիւանդութիւնն է : Սաղողն՝ անձրև է և ցնորք . խալողի առնն լաւ է :

Սաղոզ սպիտակ՝ խնդումն է. սեւ խաղողն՝ լաց է: Սաղոզ ժողոված՝
 գանձն է: Սայտ հանդերձ տեսնել՝ աւագ մեռանի: Սարտայ տեսնել՝ օ-
 տար կին մերձենայ: Սարփիզակ սև և սպիտակ կամ կանանչ տեսանելն,
 աղէկ է: Բայց ուտելն, հիւանդութիւն է: Սիարն՝ ուրախութիւն է: Սիւ-
 ցեղէն աման ունիլն, ուրախութիւն է: Սմոր ուտելն, շահ է: Սնդայն,
 չէ աղէկ: Սնծորն՝ տղայ և աղախին է. և ուտելն՝ շահ: Սնծորն թէ քեղ
 տան՝ աւետիս է: Սնծորի ծառն, մեծ մարդ է: Սոռն և համրն, շահ
 է: Սոռնկ ծխելն, ինչք և սպրանք է և անոյշ իօսք: Սորոված միս
 ուտելն, շահ է: Սող մեծ տեսնել՝ մահ է. կամ այլազգի: Սողի միս ու-
 տելն, աղքականաց մահ է: Սոտն, լաւ մարդ է: Սոտ ժողովելն, պատիւ է:

Պ.

Մաղկեայ անդաստան տեսանես՝ շահ է և ուրախութիւն: Մաղկն
 անձողութիւն է: Մաղիկ քաղել, կին առնու: Մաղկիկն, բարի է:
 Մաղկած ծառն, նոյն է: Մաղիկն ու բորն, սրանեղութիւն է: Մառ արն-
 կելն, յիշատակ է կամ այլ բան բարի: Մառ պողով, բարի է: Մառ
 կտրել կամ այրել, վնաս է: ծառն թէ ծուխ լինի, չէ լաւ: ծառին տե-
 րեւն թափի, արիւննէղութիւն է: Մառ անկանիլ, մարդոյ մահ է:
 Մառ մեծ խլիլ, յաւաղաց ոմն անկանի: ծառի տեսանես զքեղ կամ նրա-
 տիս, վառք է: Չառի վրայ գնայն, նոյն է: Մառ կանանչ, գանձ է:
 Մառ չոր, արտմութիւն է. վատ մարդ է ու չարակամ քեղ: Մամ
 զուգելն, կին է: Մամ կտրել, բոժանումն է: Մառայն, աւետիք է և խըն-
 դութիւն: Մարաւիլն չէ բարի: Մանր շալակելն, մեծ մեղք է: Միժաղկն
 արտմութիւն է: Միժն, տղայ է կամ մեծութիւն: Մնանիլ կնոջն, մեծ
 շահ գայ: Մուր ածկն առ Աստուած, յոյս է: Մով տեսնել, շատ հեծել
 է: Մով պղտոր, նեղութիւն է: Մով ցամաք, լիութիւն է աշխարհի:
 Մոլն լըւացիլն, շահ է: Մովայնիլն, մեծ թշնամի է: Մոլն ինե-
 երթաս, ի վրայ թշնամեաց իրաւանաս: Մոլն զմարդն ի ներս քարէ
 տեսնողն գողի ձեռք սպանլի:

Ե.

Կամուրջ շինելն, խիստ լաւ է: Կայծակն, խուլութիւն է: Կանանչ
 ծաղիկն, բարի է: Կապած տեսանել, անձողութիւն է: Կարկուտն, երկրի
 նեղութիւնն է: Կարասն, նեղութիւն է: Կապուտն աւերումն է: Կզմոթի
 տակ հանելն, վնաս է ըստ Դանիէլի: Կենդանի զինքն՝ ի գերեզմանի տե-
 սանել՝ մեծ զրոյց է: Կին առնուլն, վնաս մահու է: Կին հերթակ,
 նոյն է: Կին գեղեցիկ և զարդարած, երկիր է կամ քաղաք: Կոճ հեր
 կտրելն խիստ վնաս է: Կոյս զինքն տեսանել, խիստ շահ է: Կուժն,
 որդի է: Կուժ ջրով տեսանել բարի է ամենեւին: Կուպղայ տեսանել
 պատիւ է: Կուժայ տեսանել՝ հուր է: Կորեկ տեսանել կամ ուտել,
 լիութիւն է: Կրակ անկանիլն, մահ է և սով: Կըտաւ հանել, չէ՛ բարի:
 Կօչիկ տեսանել կամ աղանիլ, ճանապարհ է:

Հ

Հաց տեսանելն՝ բարի է և լաւ: Հաւն, գուարթուն է: Հաւ սիրամարգ տեսանել մեծ իշխան է: Հաւ ի ձուի վրայ, յանկարծ շնորհ է: Հաւ ի խօսիչն, մարդ ի կենաց անկանի: Հաղորդ առնուլն ծեծ է մարդոյն: Հասկ քաղելն ուրախութիւն է ըստ Պղատոնի: Հարսանիսն տրտմութիւն է: Հայրապետն՝ մեծ գրոյց է: Հայրն մեռած կենդանացեալ մեծ շահ է: Հալաւն այրած՝ շահի ի կնոջէ: Հանդերձն՝ հեծել է և թշնամի: Հանդերձ կորուսանելն՝ վնաս է: Հանդերձ գինեգոյն ունիլ, նոյն է: Հեռաւոր գինքն տեսանել կամ գայլ ոք, շատ շահ է. լաւ և բարի: Հիմն արկանել՝ հարստութիւն է: Հիմն ի վերայ հիման դնել և շինել, բարի է: Հիմն ի շինէ դուրս տեսանել՝ գերեզման է: Հիւանդ տեսանել նեղութիւն է: Հող բառնալ տեսանել՝ նոյն է: Հում միս ուտելն՝ մեծ գրոյց է: Հոր փորելն, խիստ նեղութիւն է:

Ձ

Ձեռն լուանալ տեսանել՝ աղէկ է: Ձեռն ճրագ՝ որդի լինի: Ձէթ եփելն՝ հիւանդութիւն է: Ձիթ կնոյ սօսանիսն, շնորհ է: Ձիթապտուղ ժողովելն բարի է: Ձի նստիլն, մուրաւ է և լաւ: Ձու տեսանալ կամ ժողովել, կոխ է: Ձոր տեսանել կամ անցանել, ի նեղութենէ ազատիս: Ձուկն ի ջրէն հանել, ամպ գայ կամ ձիւն կամ ջերմ լինի: Ձուկն ի կրակին՝ երկրի նեղութիւն է:

Ղ

Ղան կամ Սուլթան տեսանել՝ անչափ աղէկ է: Ղեկաւ գնան, հետ մեռելոյ գնայ: Ղամպար վառելն, բարի է: Ղեստի տեսանել չէ բարի:

Ճ

Ճանապարհ երթալն և յետ դառնալն բարի է: Ճանապարհ երթալն ի նեղութենէ ազատիս: Ճողան կամ չուվան տեսանել երկայն ճանապարհ է: Ճառ գրոց տեսանել և լսել՝ հոգս է: Ճնճղուկ տեսանել կամ ունիլ՝ բարի է: Ճրագ վառեալ տեսանել՝ ծածուկ գործք յայտնիս: Ճրագ անցեալ տեսանել՝ կործանումն է տան:

Մ

Մանուկ մօրուօք կամ ծեր այեւոր տեսանել, կենաց յաւելումն է և շնորհ: Մատանի կամ պատմութեան տեսանես կամ շինել տաս՝ իշխանութիւն է: Մատանի կտորած՝ վնաս է: Մատանի կորուսանել՝ կին կամ սիրելին մեռանի: Մատանի այլոց առնուլ՝ անհոգութիւն է: Մատանի բազում ունիլ՝ բազում կին առնու: Մատանի արծաթի՝ ի նեղութենէ ազատիս: Մատակ յուզա նստիլն, հիւանդութիւն է: Մարգարիտ տեսանել՝ մեծութեան նշան է: Մարդոյ լիռք ուտել, գանձ տեսանէ: Մարդոյ ոսկր

ուտել, ի գնտան մտանէ: Մեծահասակ զինքն տեսանել՝ փառք է: Մեծ փակեղ ուստի արկեալ՝ մեծ շնորհ է: Մեռել տեսանել կամ զազգականն կամ ի մեռելէ իրք առնուլն կամ մեռել կենդանանալն մեծ և անցեալ գրոյցն յառնէ: Մեռած զինքն տեսանել՝ շատ ապրի: Մեռելն թէ խօսի, զգոյշ լեր մի հաւատար ումեք: Մեռել թաղելն՝ շիթումն է: Մեռել ի գերեզմանի տեսանել՝ խախանի չարն: Մեռել բազում տեսանել՝ թշնամիք արձակին: Մեղր ուտելն մեղք և սրտնեղանք է: Միտ աղի տեսանել կամ ուտել՝ հիւանդութիւն է: Միրք ուտելն՝ նո՛յն է: Մոմ վառած՝ ուրախութիւն և որդի է: Մորեխն՝ հեծել է և աշխարհի նեղութիւն: Մութն և մռկն՝ վնաս է և չար: Մօրուօք զինքն տեսանել՝ շնորհք է: Մորուս գէշ, գէն է, և փետեղն խաղաղութիւն:

Թ

Յախճոտ նստիլն՝ բարձրութիւն է: Յաւազ երթալն բարի է: Յաւազն ձեռն արկանելն ի մեծ մարդէ իրք առնուս: Յաղբերէ ջուր խմելն՝ բարի է: Յամպոց ձայթմունս խելն՝ չէ բարի: Յարջէ հալածիլ՝ ի կուռոյ ազատիս. կամ յաւազէ պատրաստ կաց: Յեկեղեցի երթալ տեսանել՝ ի ծանրութենէ ազատիս: Յերկինս ելանել, մեծ պատիւ է: Յերկինս ձեռն ի վեր կալով, մահ է: Յերազի իրք ուզելն պատիւ է: Յերազի երազ պատմելն խիստ աղէկ է: Յիւր երկրէն ելանել՝ ի նեղութենէ ազատի: Յորս երթալն բարի է: Յուլտո նստիլն պատիւ է:

Ն

Նախիր տեսանես որ ի գիւղն դայ՝ աւազ է: Նախիրն որ շուրջ դայ՝ խոտվութիւն է: Նապաստակ ունենալ՝ իւրն նման տղայ կու լինի: Նաւորդ լինիլն. գրոյց ելանէ: Նաւ ոսկւոյ կամ արծաթի տեսանել՝ բարի է: Նաւ նստիլ շատ ժամանակ ապրի: Նաւ երամով, ի հեռաստանէ շահ դայ: Նաւ գանձով՝ նեղութիւն է: Նաւ այրիլն՝ երկրի խոտվութիւն է: Նաւ կոտրած՝ մահու նշան է: Նոր իրք տեսանել՝ յօտարութիւն երթայ: Նունն յօտարաց շահ է:

Շ

Շապիկ սպիտակ տեսանել կամ ազանիլ՝ արդարութիւն է. սեն տրտմութիւն է. աղտոտն մեղք է: Շեղջ ցորենոյ տեսանել զամ է: Շէնք շինելն՝ բարութիւն է և քակելն՝ վնաս: Շէրպէթ խմելն, խելաց յաւելումն է: Շիշ իւզով սոճիկ է և շահ: Շողն փառք է: Շուք առնելն մեծ պատիւ է: Շունք ընդ իրար կուլին չէ աղէկ: Շունն հաջէ կամ խածնէ՝ լեզու է. և ի չար մարդկանէ պատրաստ կաց: Շունն կամ թււաւոր գազանք՝ թշնամիք են:

Ո

Ոսկի խնձոր տեսանես՝ պատիւ է: Ոսկին կամ արծաթն՝ խիստ շահ է: Ոչխար տեսանել՝ ձմեռն է և ցուրտ: Ոչխար մորթած՝ ձմեռն լաւ

գայ : Ոչխար սեւ՝ սուգ է և արտմութիւն : Ոչխար ի ճանապարհի՝ հարստութիւն է : Ոջիկ կոտրելն մաշումն է : Ոսկր քերելն լաւ է : Ուղտ տեսանես՝ պարոն է : Ուղտ ի նստման՝ հաւատք է կամ նուազութիւն : Ուղտ պէսէրէկ չէ լաւ : Ուղտ բազում կովին՝ իշխանք կովին :

Ձ

Ձամիչն խիստ փնաս է : Ձամանն կռիւ է և աղաղակ : Ձանկն արքամութիւն է : Ձարիս գինքն տեսանել՝ ի չարէ աղատի : Ձիրն սակաւ շահ է : Չողանն ճանապարհ է : Չոր ծառն մեռեալ մարդ է : Չոր միսն ոտծիկ է և շահ : Չուխա սպիտակ տեսանել՝ արդարութիւն է : Չուխայ կանանչ հարստութիւն է : Չուխայ սեւ արտմութիւն է :

Պ

Պատարագ տեսանել կռիւ է : Պարտէզն բարի է և արդարութիւն : Պարտէզ գործելն՝ բարի է : Պաղ կոտրել տեսանել՝ խափանի չարն : Պղպեղ տեսանել՝ կակիծ է : Պղպեղ ուտես թշնամեաց պատրաստ կաց : Պսակվին խիստ աղէկ է, ոմանք ասեն թէ կռիւ է : Պսակ զարդարած տեսանել՝ նոյն է : Պսակ արծաթի հիւանդութիւն է : Պսակ ի փշոց մեծ շահ է :

Ջ

Ջաղարջ շինելն՝ մեծութիւն է, և աւերին՝ շինութիւն : Ջաղարջ/ աղունն և Ջնտի սատակն հիւանդութիւն են : Ջնուտ տեսանես, հետ ան հաւատ մարդոյ խօսիս : Ջայլամ հաւն (որ է տէվէզուշին) թէ տեսանես՝ ի նեղութենէ ազատիս : Ջուր սուրբ բմպելն՝ խիստ լաւ է, և սպրկիկ ջուրն՝ նոյն է : Ջուր ի տան քում տեսանես չէ աղէկ : Ջուր պղտոր տեսանել կամ բմպել՝ արամութիւն է : Ջուր ի գնացման տեսանել՝ բարի է : Ջուր ի գետէ առնուին փնաս է, իսկ յաղբերէ առնուին բարի է : Ջուր շատ տեսանել կամ անցանել՝ հեծեալք են :

Ռ

Ռապատ մտանելն՝ նեղութիւն է : Ռէհան ծաղիկն բարի է : Ռոծիկ տեսանել խիստ վատ է : Ռուսք կանգնած տեսանել՝ մեծութիւն է և պատիւ : Ռուսք ի ձեռին ունիլ՝ ճանապարհ է և երկիր : Ռուս տեսանել մեծ հակառակութիւն է : Ռովախ ձգելն՝ թողութիւն է հոգւոյ և մարմնոյ և ամէն բանի :

Ս

Սագ տեսանես՝ մեծ մարդ է : Սայրն սուղջութիւն է : Սաղաւարտն անհոգութիւն է : Սամիթ դաղար տեսանել՝ լաւ է : Սամիթ չոր չէ լաւ : Սանդուղ կանգնած տեսանել՝ մեծութիւն է և բարի : Սանկն և գրեհն՝ ծանրութիւն է : Սանտր ասելն՝ զեն է : Սարօք ջորի կամ ձի տեսանես՝ մեծութեան հասանիս : Սենեակ քակելն՝ ի կնոջէ բաժանի : Սիսեռն բարի

է: Սիւնն նեղութիւն և կռիւ է: Սխտորն և սոխն և սապոնն՝ կակիծ են: Սոխ և սագի միս ուտելն՝ հիւանդութիւն է: Սուգն՝ ուրախութիւն է:

Վ

Վախեալ կամ վառեալ զինքն տեսանել՝ հարստութիւն է: Վանք և արեղայ տեսանել՝ նեղութեան ամբոխ է: Վառած զոք տեսանել՝ փնաս է: Վարդ տեսանէ՝ կին առնու: Վարդ քաղելն՝ բարի է: Վարտին՝ բարի է: Վիշապ տեսանել՝ պարօն կամ աւագ է. ոմանք ասեն թէ նեղութիւն է:

Տ

Տաճար զարդարած տեսանել՝ բարի է: Տաճար այրիլն՝ խռովութիւն է: Տաճիկ տեսանել՝ արձակումն է թշնամեաց: Տախտ դիպակով՝ բարի է: Տանձ ուտելն՝ հիւանդութիւն է: Տարեխն ճանապարհ՝ է: Տիկն և տիկինն՝ արտմութիւն է: Տղայ ի գիրկն առնուլ՝ ցաւ է և հիւանդութիւն: Տուն շինելն՝ խիստ բարի է: Տունն աւերել՝ չէ բարի գանձի և ոսկւոյ զին է: Տուն իւր կամ զայլոցն աւիրած տեսանել՝ չէ լաւ. անիրաւութիւն է: Տուն իւր կամ զայլոցն արծաթի տեսանել՝ փնաս մահու է: Տունկ արկանելն ազգաց օրհնութիւն է:

Յ

Յեխն՝ որ է չամուռ՝ փնաս է և արտմութիւն: Յեցն՝ լեզու է: Յիցն չար լեզու է: Յից հանելն նեղութիւն է. ոմանք ասեն թէ աղէկ է: Յորեանն՝ ցնորք է: Յուլ բռնելն՝ աղէկ է:

Փ

Փայտ տեսանելն կամ առնուլն՝ խիստ աղէկ է: Փոխինտ ուտելն զին է: Փող հարելն՝ թշնամիք կորնչիլն: Փող հարկանելն՝ մեծութիւն է, և բախտի տիրանայ: Փուկայ խմելն՝ հիւանդութիւն է: Փուշ հատանելն՝ թշնամեաց կորուստ է: Փուշն թէ ի յափղ ժողովես՝ չար ժամանակ է: Փոքր մարդ տեսանել՝ շնորհք է:

Ք

Քաղաք մտանել տեսանես՝ աղէկ է: Քաղցր իրք ուտելն՝ չէ լաւ: Քաղցր ձգելն՝ փնաս է: Քարինս ժողովելն՝ լեզու է: Քար ի հիմն ձգել՝ թշնամի է: Քարի վերայ նստիլն՝ դամ է: Քացախ խմել տեսանել՝ խափանի չարն: Քղամիզ հագնիլն խնդութիւն է:

Օ

Օճն թէ հետ իւրն խօսի՝ հանց բան առնէ որ ամէն մարդ և աշխարհ զարմանայ: Օճն թէ սպանանէ՝ զիւր թշնամին յաղթէ: Օճն թէ ի մահճի տեսնու՝ կին առնու: Օճն թէ խայթէ՝ ի թշնամեաց զէն զայ: Օճն թէ յիւր վերայ յարձակի ի թշնամեաց ահ զայ: Օճն թէ ի փորն մտնու՝

ի թշնամեաց չար խօսք լսէ : Օձն թէ ի վերայ անկողնոյն սպանանէ՝ իւր կինն մեռանի : Օձն թէ տեսնու և չվախէ՝ ի թշնամեացն անհոգանայ : Օձն թէ յիւր տան մէջն տեսնու՝ իւր կինն հետ իւրն թշնամանայ : Օձն թէ երկու կտոր առնէ՝ նա յիւր թշնամոցն՝ իւրեանն շահ գայ : Օշինար տեսանել կամ խմել՝ կոհւ է :

Արդ՝ ո՛վ որ երազ տեսնու՝ զարհուրի և վախէ, յիշեսցէ զԴանիէլ մարգարէն և զերեք մանկունքն և զԱթանազիինէ հայրապետն : Եւ երեք մոմ վառէ յեղեկեցին . և եօթն ծուներ կրկնէ . և զվերոյ գրեցեալ սուրբքս յիշէ, ամէն շար երազ ի բարին կատարի Աստուածով :

Ա Ն Գ Ո Ւ Յ Ե Ր Ա Ձ

Երազիս մէջ ամէնէն բարձր լերան
կատարին ձիւնն էի խեբ,
Նուշաներանդ. շուշանամբիծ, անաւեր,
— Կոյս բնութիւնն իսկ դաժան :

Ձիւնն անհա՛լ միշտ, ներկա՛յ՝ բոլոր դարերուն,
Աղամանդէն կարծր, հոօր,
Տարագս էի ըրեր չքնաղ և մի՛շտ նոր,
ձերմակութեամբ մը անհուն :

Արշալոյսներն իմ մէջս էին լո՛ււս պաղած .
Ես դէտ կայի անտարբեր .
Ժամանակին դամբանն էր ձիւնս անտուեր,
Միջոցին մահն՝ իմ հայեացս... :

Ի զո՛ւր կեանքին կը գալարուէր բոցն երկար,
Կը հսկէի իրմէ վեր .
Իրերը բա՛ւ մըն էին լոկ . — Իմ ձիւնս էր
Լոկ զուարթ, վայրի, անսպառ :

ձերմակութիւնս էր զուարթութիւնն Անհունին,
Վսեմ կարծրութիւնս՝ իր Սիրան .
Իր օթեւանն՝ իմ հայեացքս անխլիբտ
Ուր աւօտներ լուս կային... :

Հանդիսատե՛սն էի անցնող բաներուն
Որ կարգով ինձ կուգային .
Եւ կը ցնցուէր անոնց շարժմամբը վերջին՝
Իմ տարագիս վսեմ ձիւնն... :

— Ընդունէ՛ մեզ, կը հծծէին ամէնքն ալ,
Ա՛հ, քաղցր է մեր յիշատակ .
Մեր ետեւ դեռ կը միայ կեանքն սպիտակ,
Ուղիղ, հետքով մ՛անմուսլ :